Դաս 43. Ռազմական գործիչ

- *Հայկական բանակն իր մարտունակությամբ հռչակված էր Հին աշխարհում: «Ըստ հույն աշխարհագրագետ Ստրաբոնի՝ հայկական ռազմական արվեստը Հին աշխարհի շատ ժողովուրդների և երկրների ռազմական հզորության մակարդակը գնահատելու որոշակի փորձաքար էր»:*
- *Հայկական ռազմարվեստի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել խեթական թագավորների արձանագրություններում: Համաձայն դրանց՝ հայկական Հայասա պետության արքան (Ք.ծ.ա 14–րդ դար) իրենց դեմ կիրառել է գիշերային մարտավարություն՝ անբարենպաստ իրադրության պատճառով խուսափելով բաց դաշտում վճռական ճակատամարտ տալուց: Հայկական զորամիավորումները գիշերային գրոհներով ստիպել են խեթական զորքին նահանջել: Սա գիշերային մարտավարության մասին առաջին հիշատակումն է համաշխարհային պատմության մեջ:*